ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 փետրվարի 2021 թվականի N 04-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N44-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 2021 թվականի բյուջեի ֆինանսական ծախսերի կատարման նախահաշվում կատարել փոփոխություն՝
   1) Գյուղատնտեսություն՝ 4.2.1 բաժնի 4111 հոդվածի 550,0 հազար դրամն ուղղել նույն բաժնի 4239 հոդվածին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Այգեկ համայնքի ղեկավար _____ **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2021թ. փետրվարի 02
գ.Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 փետրվարի 2021 թվականի N 05-Ա

ԳՈՀԱՐ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Գոհար Սիմոնյանի 2021 թվականի փետրվարի 4-ի դիմումը՝ շինարարության թույլտվություն տալու մասին՝ *որոշում եմ.*

1. Քաղաքացի Գոհար Սիմոնյանին՝ համասեփականության իրավունքով պատկանող 3-րդ փողոց 8 հասցեում գտնվող, 04-009-0004-0005 կադաստրային ծածկագրով տնամերձ հողամասում բնակելի տուն կառուցելու նպատակով՝ համաձայն հաստատված նախագծի, տալ շինարարության թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Այգեկ համայնքի ղեկավար՝ _____ **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2021թ. փետրվարի 04
գ.Այգեկ